№ 65 Ապրիլ 17 (29) 1880 Ապրիլ 17 (29) № 65

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Նամակաբաշխիչ դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿԱՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Մի ուրախալի լուր Ս. Պետերբուրգից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ալեքսանդրապոլից։ Նամակ Աստրախանից։ Նամակ Նոր-Բայազէտից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Ֆրանսիա։—Խառնուածք։—Հայտարարութիւններ։—Բանաստեղծ Կ. Պոլսի մասնաժողովի տեղեկութիւնները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

—

Անգլիայի ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը մի կատարված իրողութիւն է արդէն։ Իրիկնանիպիդ հրաժարական է տուել հէնց որ տեսել է թէ մեծամասնութիւնը պարլամենտում կը պատկանի ազատամիտ կուսակցութեանը։

«Մշակի» երէկվայ համարում ընթերցողը արդէն հեռագիր է կարդացել, որ հաղորդում է թէ ինչ անձինքներից է կազմված նոր մինիստրութիւնը։

Մինիստրութեան փոխվելով կը փոխվի և Անգլիայի թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը։

Պահպանողականների անսիրտ և շահասէր քաղաքականութեան տեղ պէտք է այս ունենայ երեւան կը գայ ազատամիտների լայն, մարդասէր քաղաքականութիւնը։

Այն անձինք, որոնք ղեկավարներ կը լինեն այժմեան անգլիական մինիստրութեան, պ. պ. Գրլադստոն, Գրէնվիլ, Հարտինգտոն և ուրիշները, արդէն առաջ յայտնի էին իրանց մարդասէր հայեացքներով առհասարակ և մասնաւորապէս արևելքի ըրիստոնեայ ազգերի վերաբերութեանը։

Թիւրքաց հայերից, Կ. Պոլսի ազգային ժողովից, Կ. Պոլսի մեր գործիչներից, մանաւանդ սրբազան պատրիարքից կախված կը լինի այժմ օգուտ քաղել անգլիական նոր կառավարութեան տրամադրութենից և գրաւել մինիստրութեան ուշադրութիւնը Հայաստանի վրա։

Մեր կարծիքով անհրաժեշտ կը լիներ այժմ թիւրքաց հայերին կրկին իրանց միջից պատգամաւորութիւն ուղարկել Եւրոպա, մանաւանդ Անգլիա, իրանց հայրենիքի դատը լուսաւորված Եւրոպայի առջև նոր ոյժով և եռանդով պաշտպանելու համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՈՒՐԱԽԱԼԻ ԼՈՒՐ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Մենք շատ անգամ հաղորդել ենք, գրում է «Голосъ» լրագիրը իր № 99-ի մէջ, որ Թիւրքիայի հետ մեր ունեցած վերջին պատերազմի բեմի վրա սարսափելի սով է տիրում։ Ինչպէս հաղորդեցին Կ. Պոլսի և անգլիական լրագիրները սովամահ լինելու դէպքեր շատ են պատահել, դեռատրապէս Վանի նահանգում։ Թիւրքաց կառավարութիւնը, իր սովորութեան համեմատ, ոչինչ միջոցներ գործ չը դրեց, թէպէտ առաջուց կարելի էր իմանալ, թէ պատերազմը, որ ազգարնակութեան բոլոր միջոցները սպառեց և արդելից երկրագործական աշխատանքներին, պէտք է անպատճառ այն տխուր հետևանքների հասցնէր, որոնք այդպէս անողորմաբար յայտնվեցին այս տարի։ Ողորմելի երկրի ազգաբնակութիւնը դիմից հասարակութեան բարեգործութեանը և ի պատիւ Անգլիայի պէտք է ասել, որ նա առաջինը ընդունեց այդ հրաւէրը, շտապելով ուղարկել իր բարեգործական դրամական միջոցներ սովալներին բաժանելու համար։ Մի բան էլ ուշագրված է Ռուսաստանից, առաջնորդական հայերից, որոնք չափազանց հետաքրքրված են իրանց հայրենակիցների տարաբաղդ վիճակով։

Մենք լսել ենք, որ չորեքշաբթի, ապրիլի 9-ին, Գագարինսկայա Լաբրեժնայա փողոցի վրա գտնված զեղարուեստական կլուբի մէջ լինելու է զեղարուեստական երեկոյ, որի եկամուտը նշանակված է թիւրքաց հայասատանի սովալլուկ հայ բնակիչների համար։ Այդ երեկոն, բացի բարեգործական նպատակ ունենալուց, նշանաւոր է ինչպէս իր աղիշայի բազմաղղանի լինելով, նոյնպէս և Ս. Պետերբուրգի արուեստական նշանաւոր ոյժերի մասնակցութեամբ։ Ներելի է այս ունենալ, որ մեր բարեգործ հասարակութիւնը անուշադիր չի թողի ապրիլի 9-ի զեղարուեստական երեկոն։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Մարտի 31-ին

Մենք, կաթոլիկ հայերս, միշտ մեծ բաւականութեամբ ենք կարդում, երբ հանդիպում ենք ձեր պատ. լրագրի մէջ այնպիսի մտքերի, որով յայտնում էք, թէ կրօնական խտրութիւնները մի կողմ թողնելով, պատեհան իրարի մի հոր գտակներ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

Կ. ՊՕԼՍԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՔԵԼԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Ստացանք Կ. Պոլսից «Հայաստանի սովեալց խնամող կենտրոնական յանձնաժողովից» հայտարարութիւնը, որից քաղում ենք հետևեալը.

Ահա երկրորդ անգամն է, որ կենտր. յանձնաժողովը հաճաատ կերպով ներկայացնում է իր բարերարներին և նուիրատուներին այն տեղեկութիւնները, որ վերաբերում են Հայաստանի սովամանուներին։ Յանձնաժողովը հաղորդում է և այն հեռագրները, որ ստացել է զանազան գաւառներից, որոնց մէջ տարածված է սովը, որպէս զի այդ հեռագրների տրամադրութեան համեմատ բարերար անձինք չտապեն գործել, խորհել և սովատանջ ժողովրդի կեանքը ազատելու հնարների մասին ալեհատել։

Որպէս պիտի տեսնենք յանձնաժողովի ստացած հեռագրներից, սովատանջ ժողովրդի մի չքնաղ բակեալ սառնապատ Էջը ուրիշ, ձգվում է մինչև տոքատի Բաղդատ, և ամփոփում է իր տարածութեան մէջ ռուսական և պարսկական սահմանների գաւառները, անցնելով մինչև Աև ծովի և Պարսից ծոցի ափունքը։ Նոթութեան այդ ընդարձակ տարածութեան վրա, թէկ ամէն տեղ տիրում է սովը, բայց իւրաքանչիւր տեղում առանձ է եկել տարբեր պատճառներից։ Մէկ գաւառի մէջ ցանքերը հրաւտրվելից չորացած են եղել, միւսի մէջ անձրևները և խոնաւութիւնն է փոփոխել, երրորդի մէջ կարկուտը կամ մարախն է ապականել հունձքի արտերը, իսկ չորրորդի մէջ դաչտամկներն են կրծռուել արմատները։ Ու սակաւ նպաստել է սովի տարածվելուն վերջին պատերազմը, որի ժամանակ ողջերի պանդուխտեան ծանր բեռը ժողովրդի վրա մնալով, սպառեց նրա ունեցած ուժերի պաչարը։ Բայց ուրախալի է տեսնել, որ այժմ հարուստը և ազքատը արեւելեան եղբայրասիրութեամբ բաժանում են իրանց մէջ գտնված նիւթն պարէնը։

Թէև բարեգործ անձինքը չատ և խիստ չատ նուիրեցին յոգուտ իրանց սովատանջ եղբայրներին, բայց դեռ ասելի են չնորհելու պարտաւոր են։ Այդ պարտքը կատարելու ստիպված ենք, ոչ միայն առաքինութեան զգացմունքից դրդված, այլ մեր սեպհական շահերի կէսից նայելով թշուառ իրդութիւնների վրա։ Մենք, առաւտեանն մէջ ապրողներս, եթէ այժմ չօգնենք սովալներին, չատով կը տեսնենք հետեղի նման նրանց թափված մեր երկրներում, և բնականաբար, նրանց պանդուխտեան հողը զարձեալ մեզ վրա պիտի ծանրանայ։ Ուրեմն, որչափ գթութիւնը, նոյնչափ և իմաստութիւնը պարտաւորացնում է մեզ այդ սովալի և համատարած չարիքի առաջը առնել, որ մեր ժողովրդին մահ է սպառնում։ Հայաստանը կարճատև ամառ և երկարատև ձմեռ ունենալով, սովի ժամանակ, աւելի քան միւս երկիրները գթութեան և օգնութեան կարօտ է։

Յանձնաժողովից ստացած տեղեկութիւնների համեմատ, Հայաստանում ներկայ տարվայ աշնանացանքը խիստ սակաւ և ազքատ է։ Հողագործական անասունները մեծ մասամբ կոտորված կամ գլխված են, և առհասարակ ամբողջ Հայաստանը զուրկ է ցորենից։ Այդ հանգամանքները աչքի առջև ունենալով, չատ հաւանական է մտածել, որ գալոց տարվայ մէջ ևս ժողովրդը պէտք է ուտեստի պակասութիւն ունենայ։

Մինչև այսօր մնացն միտը և սասակ ձմեռը կարողացան ժողովրդին իր բնիկ երկրի մէջ պահել։ Բայց երբ ձմեռը կը հալվի և ճանապարհները կը բացվին, այն ժամանակ սովալ ժողովուրդը մարախի նման կը տարածվի դէպի այն գաւառները, ուր կարող է հաց գտնել։

Գուցէ այս ամառ գիւղացիները մեծ մասամբ բանվորագործներով կերակրվելով, աւելի հացի կարոտութիւն չը պիտի զգան։ Բայց առաջիկայ ձմեռվայ ժամանակ սովը դարձեալ անխուսափելի կը դառնայ, եթէ կանխապէս ժողովրդի համար պաչար նախապատրաստելու տնօրինութիւն չը լինի։ Այսինքն, պէտք է նրանց երկրագործական անհրաժեշտ անասուններ տալ, որ համարեա սպառված են, պէտք է սերմ բաժանել գարնանացանքը անելու համար, որ ապագայում հունձք ունենան։ Այս բոլորի համար օժանդակութիւն պէտք է, փող պէտք է, որովհետև աղքատ գիւղացին ձեռքում ոչինչ չունի։

Յանձնաժողովը խոստովանվում է, որ Հայաստանի սովալ գաւառների ապագայի համար դեռ ևս մի առանձին տնօրինութիւն չէ արել, այլ իր ստացած գումարները բաժանել է միայն ներկայումս ժողովրդի կեանքը պահպանելու սովամահ լինելուց։ Բայց ապրիլ ամսից յետոյ ապրուստը աւելի անտանելի կը լինի, որովհետև այդ ժամանակ հացի ամբարները մեծ մասամբ սպառվում են։

Յանձնաժողովը փափագ է յայտնում, որ բարերար անձինք այսուհետև աւելի ևս պէտք է կրկնապատկեն իրանց ողորմածութիւնը Հայաստանի սովատանջ ժողովուրդը իր օրհասական կորուստից ազատելու համար։ Եւ այդ կարելի է յուսալ այն ժամանակ միայն, երբ ժողովրդին միջոցներ կը տրվի, երբ ժողովրդին օգնութիւն կը մատուցվի իր վարը վարելու, իր ցանքն անելու և իր հացը իր ձեռքով պատրաստելու։ Հայաստանի ժողովրդի կեանքը այժմ կախված է այդ օգնութիւնից, որի վրա նրաւրում է յանձնաժողովը Հայաստանի բարեկամների և նրա վրա մտածողների ուշադրութիւնը։

Գիտենալ տեղեկութիւններից յետոյ յանձնաժողովը ուղարկում է մեզ մի շարք հեռագրներ, որ նա ստացել է զանազան գաւառներից։ Ահա պատճէնները.

1. Վանն, 13/25 մարտի, 1880։ Վանայ հայոց Ընդհանուր ժողովը իր բացման օրը խորին շնորհակալութիւն քուէարկեց (Կ. Պոլսի) պատրիարքական Յանձնաժողովին, որ կազմված է սովալների օգնութեան համար, այլև բոլոր թէ ներկայ և թէ ապագայ ողորմածներին։ Առնապատ Խրիմեան արքեպիսկոպոս։ Առնապատիր Հանիկեան։

2. Վանն, 15/27 մարտի, 1880։ Մարտի 10-ին ձեր հեռագիրը ստացայ։ Մածածողովը այլ և այլ թուականով ձեր հեռագրերը ստացած և պատասխանած է, իր պարտաւորութիւնները կատարելու մէջ անփոյթ չէ, անդադար ալեհատում է։ Բայց ուտեստի սակաւութեան պատճառով դժուարութիւնները օրըստօրէ աւելանում են։ Մեր յոյսը միայն Բիթլիսից ստանալու ցորենի վրա ենք դրած։ Օգնական կոչակալի Ազաթոն։

3. Վանն, 15/27 մարտի, 1880։ Լրագրների մէջ կարդացինք, որ Սերբատիայի ամբարների ցորենները պէտք է փոխադրվին Վան։ Որքան էլ արագութեամբ բերելու լինեն, այս ցորենները հասիր Թէ երկու ամսուայ ընթացքում կարող են Վան հասցնել։ Մինչև այնօրը ժողովրդի կեանքը անապին վտանգի ենթակայ պէտք է լինի։ Ներկայ սովը Գաղատիայի անցեալ սովից աւելի ևս սարսափելի է։ Օսմանեան պետութիւնը հին սովեալ աշխարհին մեծապէս նպաստեց։ Յուսով ենք, որ ուսատագիր Սուլթանը թող չի տայ, որ մենք՝ իր Թշուառ և հաւատարիմ հպատակներս՝ սովի տառապանքների մէջ չարչարվինք։ Խրիմեան արքեպիսկոպոս։

4. Վանն, 15/27 մարտ, 1880։ Ժողովուրդը հազիւ տասն և հինգ օրվայ համար ցորեան ունի։ Յեղական կառավարութիւնը միայն քաղաքի մէջ տասն և երկու հազար սովալ մարդկանց հաց է մատակարարում։ Օրական հարիւր տիրէմ հաց պարտաւորվում յիսունի իջեցնել։—Մեր ձրիաբար հերկրված սովալների թիւը չորս հազարից աւելի է։—Մի քանի յանձնաժողով ամբարների տէր կայսեցեալ սոներ խուզարկեց և ոչինչ չը գտաւ։—Ժողովրդի կեանքը պահպանելու համար պէտք է Բիթլիսից Վան ցորենի փոխադրութիւնը չապարելել։—Ցանքի եղանակ է։ վերջին երկու ամիսների մէջ ցանվելու և հնձվելու համար չատ հար-

պէտք է եղբայրական մեռք մեկնենք միմեանց, և թէ լուսաւորչական, թէ կաթոլիկ և թէ բողոքական հայերս զուսարվենք այդպանութեան դրօշի ներքոյ։ Այդ հրաւէրը ոչքան գեղեցիկ է, այնքան առաւել նպատակայարմար է։ Բայց ցաւելով պիտի խոստովանենք, որ լուսաւորչական հայերի մէջ տակաւին տիրում է մի սաստիկ նախապաշարմունք դէպի իրանց կաթոլիկ եղբայրները։ Իբրև ապացոյց, ես օրինակ կը բերեմ մի փաստ, որ թէև այնքան նշանաւոր չէ, բայց դարձեալ կարող է ծառայել որպէս մի փոքրիկ յայտնիչ մոլեռանդութեան։ Մարտի 28-ին կատարվեցաւ մեր եկեղեցում «Ճանապարհ խաչի» կոչված ծէս։ Եկեղեցին լի էր ամէն տեսակ ու հասակի հայլուսաւորականներով, որոնք փոխանակ մտածելու թէ Աստուծոյ ճանապարհի մէջ են գտնվում, և փոխանակ պատկառանք ցոյց տալու դէպի նրա մէջ կատարվող արարողութիւնները, սկսեցին ծիծաղել, ազմուկ բարձրացնել և եկեղեցին իրանց կատակների հրապարակ դարձնել։ Այսպիսի անկարգութիւններ համարեա ամէն տարի պատահում են եկեղեցում։

Խօսելով հայ-լուսաւորչականների մոլեռանդութիւնների վրա, ես նպատակ չունեմ բոլորովին անմեղպարիր կացուցանել մեզ՝ կաթոլիկներիս։ Մանաւանդ մեր հոգեւորականների անարարութիւնը դէպի ուսումը և մանուկ սերունդի կրթութիւնը պախարակելու արժանի է։ Բա՞ զրում միայն այս խատում են ժողովուրդը խաւարի և տգիտութեան մէջ պահել։ Մեր ուսումնարանը մօտ երկու տարի է ուր ամիս մեր պատուելի հայրերի չնորհիւ փակված էր։ Շատերը ցանկանում էին իրանց զաւակներին յանձնել լուսաւորչական հայոց կարապետական դպրոցը, բայց քահանաները արգելում էին, ասելով, թէ մեր որդիներին հաւատից կը հանեն։ Վերջապէս տէր-Պիմոն հայրը բարեհաճեց բաց անել դպրոցի փակված դռները, և 120 բուլի առաջիկով վարձեց մի ուսուցիչ, որ վարժապետութիւն անէ և մի և նոյն ժամանակ եկեղեցում պատարագի ժամանակ տիրացուութիւն անէ, երևակայեցէք, թէ ինչ կարող է սովորացնել մի այսպիսի ողորմելի ուսուցիչ, մանաւանդ որ կաթոլիկ եկեղեցում պատարագները այնքան յաճախ են կրկնվում, որ տիրացուները հանգստութիւն չունեն։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ԱՍԼԱՆԵՒՑ

—

մարտի 26

Ձեր լրագրի 48-րդ համարում հաղորդված էր, թէ Աթաչեանի «նոյ դպրոցների մի քահանայուսուցիչ ամենայնին առիթով անխնայ ծեծում է աչակերտներին և աչակերտուհիներին և թէ անցեալ տարի մի աչակերտ վախճանվեցաւ տէր հօր ուղղիչ և դասախարկիչ մեթոդին ենթարկվելով։»

Ստորագրեալքս չտեսանում ենք յայտնել որ Ախալցխայի հայկական ուսումնարաններից մեր հոգաբարձութեան տակ գտնված կարապետեան և Եղիսաբէթեան երկսեռ ուսումնարանների մէջ ծեծելը արգելված է և թէպէտ չենք կարող ասել որ այդ կանոնը ամենախիստ կերպով պահպանվում է ամէն մի ուսուցչի կողմից, բայց և բացարձակ կը վկայենք որ վերոյիշեալ ուսուցիչքահանայի կարապետեանցի և Եղիսաբէթեան ուսումնարանների ուսուցիչներից չէ, ինչպէս այդ ստորագրեալս ամսոյս 24-ին եղած քննութիւնից, և եթէ, զուրաղդաբար, Ախալցխայի հայկական ուսումնարանների մի աչակերտ ուսուցչի ծեծելով անցեալ տարի վախճանած է (որը մեզ ճշմարիտ չէ թւում) այդ աչակերտը նոյնպէս կարապետեան և Եղիսաբէթեան ուսումնարանների աչակերտներից չէ։

Հոգաբարձուք՝ Դասպար Մելքոնեանց, Արշակ Յակոբեանեանց, Մկրտիչ Ազնաուրեանց, Գ. Պուտուլեանց, Յ. Դեղամեանց։

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Փետրվարի 26-ին

Ձեր պատուական «Մշակ» լրագրի 19-որդ համարում կարդալով Վանայի համազգի բազմատեսակ արկածներով տանջված եղբարց ողբալի վիճակը և անժամանակ վերահասած անգութ սովը, խղճահարվելով «Մշակի» ձայնից, իբր հայ, ձեռնարկեցի հանգանակութեան մի քանի հայ և թուրք պարոնների, և հաւաքելով մի գումար, այն է 209 բուրլ, որի մէջ գտնցի իմ լուման, ուղարկում եմ ձեզ, ահա, խնդրելով որ հասցնէք այդ գումարը յոգուտ վասպուրականի հայ սովալուկների և բարեհաճէք տպել Նուիրատուների հանուսկ ցուցակը։ Յարգութիւն Աթանասեանց 5 բ., տ. Եղիսաբէթ Աթանասեանց 5 բ., Աստուածատուր Աղամեանց 5 բ., տ. Եկատերինէ Աղամեանց 5 բ., Յովհաննէս Աւագեանց 10 բ., տ. Եղիսաբէթ Աւագեանց 5 բ., տ. Մարիկ Քանանեանց 5 բ., Յովսէփ Կիրիկեանց 6 բ., Այլ ոմն 10 բ., Մարտիրոս Սոսեփանեանց 5 բ., Յովհաննէս Դուռգեանց 3 բ., Գէորգ Բարխուդարեանց 5 բ., Յակոբ Կրանիչկիանց 15 բ., տ. Եկատերինէ Սրանիչկիանց 10 բ., Յովսէփ Կուզիչեանց 3 բ., Աւետիս Թումայեանց 5 բ., Բարսեղ Բ. Զաքարեանց 5 բ., Եղբարք Բարսեղեանց 6 բ., Մխիթար Դաւթեանց 3 բ., Մկրտիչ Բարսեղեանց 5 բ., Բուռնեաթ Մելիքեանց 10 բ., Եփրէմ Մաղանդարեանցեանց 5 բ., Սարգիս Աւետեանց 5 բ., Եղբարք Եղիեանց 10 բ., Մկրտիչ Փարբիկեանեանց 5 բ., Յովսէփ Մովսիսեանց 5 բ., տ. Եկատերինէ Պողոսեանց 3 բ., Եղիա Սայատնովեանց 3 բ., N. N. 10 բ., Նազարէթ Բօսոյեանեանց 3 բ., տ. Անոյշ 5 բ., Եղբարք Տուրբասեանց 5 բ., Ս. Մաղմաղիսէ Փարբիկեանցեանց 1 բ., տ. Մարիամ Փարբիկեանեանց 1 բ., Գէորգ Սայատեանց 3 բ., Մաշատ-Թաղի Աստուածոյ տղի 5 բ., Հաղի ազգ 3 բ., Մաշատի Աբրամ 3 բ., Մահտա-Թաղը 3 բ.։ Գումարն է 209 բուրլ։

Յարութիւն Աթանասեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

—

Մարտի 20-ին

Լրագիրներից երևում է, որ սովը տիրում է Հայաստանում, ուստի ես, տեսուչ Նոր-Բայազէտի արքունական դպրոցի հանդերձ իմ աչակերտներովս բանալով ստորագրութիւն յոգուտ թուրքաց Հայաստանի սովատանջների, գումարեցի 32 բ. 60 կ., որ և ուղարկում եմ ձեզ, խնդրելով բարեհաճէք հասցնել ուր հարկն է և տպագրել ձեր պատուական «Մշակ» լրագրում նուիրատուների անունները։ Տեսուչ Յովսէփ Թառումեանց 3 բ., տիկ. Մոնա Թառումեանց 2 բ., օր. Զարուհի Թառումեանց 50 կ., օր. Մարիամ Թառումեանց 50 կ., օր Արզաչամ Մամիկոնեանց 50 կ., Եղիազար քահանայ Տէր-Մկրտչեանց 1 բ., Ազաբէկ Բռնդաղեանց 50 կ., Արզուման Մելիք-Սոսեփանեանց 80 կ., Սոսեփան Տէր-Գէորգեանց 1 բ., Սիսակ Զաքրեանեանց 25 կ., Սիրական Տէր-Գրիգորեանց 40 կ., Վանայ Եղիկեանց 50 կ., Կարապետ Բուզումեանց 1 բ., Գէորգ Սինանեանց 40 կ., Համազասպ Մալաքեանց 50 կ., Արշակ Մաղարեանց 70 կ., Թանբարայ Մաղաղի Շարիֆ Օղլի 50 կ., Ստեփան Գրիգորեանց 25 կ., Գաբրիէլ Սմբատեանց 20 կ., Գաբրիէլ Տէր-Գէորգեանց 30 կ., Թադէոս Մարգարեանց 1 բ., Աբրահամ Կարապետեանց 50 կ., Սիրական Կարապետեանց 50 կ., Եղոր Բուզումեանց 25 կ., Գեղամ Բուզումեանց 25 կ., Լեոն Բուզումեանց 25 կ., Նիկոլայ Նիկողոսեանց 20 կ., Բէկլար Նիկողոսեանց 20 կ., Երուանդ Նիկողոսեանց 20 կ., Իկնատիոս Աղամեանց 50 կ., Տիգրան Բաղիկեանց 50 կ., Գէորգ Բաղիկեանց 50 կ., Վահրամ Հայրապետեանց 60 կ., Վանայ Աղամեանց 25 կ., Ներսէսեան Թոյտրեանց 30 կ., Հայկարամ Տէր-Մկրտչեանց 50 կ., Գեղամ Աֆրդիասեանց 30 կ., Մեսրոպ Տէր-Գրիգորեանց 50 կ., Սմբատ Մելիքեանց 1 բ., Խաչատուր Թարուբիանեանց 40 կ., Հայրապետ Առաքելեանց 50 կ., Սիրական Գայկարեանց 50 կ., Գաբրիէլ Գայկարեանց 40 կ., Թակոր Տէր Գէորգեանց 45 կ., Երուանդ Մամիկոնեանց 40 կ., Իսահակ Տէր-Մարտիրոսեանց 50 կ., Մկրտչէլ Տէր-Մարտիրոսեանց 50 կ., Արշակ Մամիկոնեանց 50 կ., Արմենակ Դաշտոնեանց 30 կ., Աֆքսանդր Դաշտոնեանց 25 կ., Ասկար աղա Բասամանսկի (ազգայր 50 կ., Լեոն Սմբատեանց 40 կ., Այրապետ Բուլնպեանց 20 կ., Գեղամ Վարդանեանց 1 բ., Եկոր Մելիք Թանբեանց 50 կ., Բայազիկ Տէր-Գէորգեանց 50 կ., Ազաբէկ Տէր-Գէորգեանց 50 կ., Գէորգ Սարգսեանց 50 կ., Գէորգ Նենիբարեանց 20 կ., Մկրտիչ Վարդապետանց 50 կ.։ Ընդամենը 32 բ. 60 կ., փոստի ծախսը չը հաշվելով, որն ես վեր առայ ինձ վրա։

Տեսուչ Յ. Թառումեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 16 ապրիլի

Խնդրում հետաքրքիր լուրը ձեր լրագրի մէջ տպելը կատարվորութիւնը թոյլ է տուել Թիֆլիսի հայ կանանց մասնաժողովին Ալէքզի խաղալ յոգուտ Հայաստանի սովեալների, որ կը լինի Զատիկ գիշերը առաջին շաբթին։

Վանորայ հրաւիրում ենք բոլոր ցանկացողներին իրեղէններ նուիրելու։ Համար գիտել տալիս խատեսանին (Լաբորատորնայա փողոց, Գամբրովի տանը), տիկին Տէր-Դաւթեանին (Հայոց փողոց, Շլեսվի տանը), տիկին Ն. Վերմիշեանին (Կոլենիա, Միքայէլեան շօսէ, սեփական տանը), տիկին Կ. Թոտիսեանին (Սալալակ, Հին-Խնտրուսաի փողոց, Ղայտմազեանի տանը), տիկին Մ. Խորդվանին (Սալալակ, Սաղոլայա փողոց Շաղիեանի տանը) և Յատուբեանի լամպերի խանութը (Գիորգովի փողոցի վրա)։

Կատարիչ Եսմանդուհի

կաւոր է Տրապիզոնից հազար Սամսոնի քիչ կողմի (գաղը) հասցնել մեզ։ Թրխման արքեպիսկոպոս։

5. ԲԻԹԼԻՍ, 24 մարտի, 1880։ Կարտեաներին գաղը մինչև այսօր համբերութեամբ տարաւ հացի պակասութիւնը։ Իսկ այժմ յուսահատ, ուժաթափ, դիմում է գթութեան։ Առանց յուսաբեր օգնութեան, մահուան դատապարտված է։ Ազգային զաւակներ ժողով։

6. ԲԻԹԼԻՍ, 25 մարտ. 1880։ Ամենեքեանս հաւատարակոյս անօգնութիւնից տանջվում ենք։ Յուսահատ ծնողների անիծեամ մանուկները փողոցների մէջ թափառում են։ Գթացէք մեզ։ Հայ հոգեվոր քահանայ Աւետիս (Անդրեասեանցի) Արարատ։

7. ՎԱՆ, 17/29 մարտ, 1880։ Այսօր մարտ 15 և 16 թուականով ձեր երկու հեռագիրները ստացայ։ Բոլշոյի գործարանները գանգում են։ Կառավարութիւնը միայն սովով է զբաղված։—Բընդիչ բարձր յանձնաժողովը Վարի փայլի ձեռնաւորութեամբ, յոյս ունի անպատճառ։ Մուշից ցորեան ստանալու։—Վերոյիշեալ յանձնաժողովը պարտած համարված տեղերում բանալու համար, բայց կառավարութեան ամբարներից, Արճէկի վրա քսան և չինգ քիլէ ցորեան հաւաքելու տուաւ։—Զմանչայ սատանաների պատճառով այն տեղերը, որ տնարաւոր չէ պատարագ մատուցել, յանձնաժողովս դրամ է ուղարկում։—Ձեր բոլոր հեռագրերի միտքը հասկացայ։ Այսօր օրը փոքր ինչ մեղմացած է երևում։ Հեռագիրների կողմերում սովամահներ են պատահել, բայց դրանց թիւ պատճառական տեղեկութիւնը չունենք։ Մեր ջանքերի վրա վստահ ենք։ Օգնական կուսակալի Աղաթան։

8. Վան, 18/30 մարտ, 1880։ Բոլշոյի վերաբերութեամբ ձեր ցանկացողների համամտ պիտի գործենք, և հարկը պահանջած ժամանակ փոխառութիւն կանենք։—Սովը սաստկանում է. դրա չարչարանքը մինչև հունձքի ժամանակը կը տեւի, այս պատճառով հարկաւոր է, որպէսզի սովալուկների ոգեկան հոգի համար մեք մտածում, նոյնպէս և է սովորեցնենք դրանց։ Թրխման արքեպիսկոպոս։

9. ՄՈՒՇ, 12/24 մարտ, 1880։ Ամէն ազգականներս հացի կարօտ ենք, քաղցածութիւնից մեռնում ենք, ի սէր Աստուծոյ, արքունի ամբարներից մեզ ցորեան հասցրէք. գթացէք մեզ վրա, և նրա համամտաս հանեցէք գործել։ Մարմտական և ոչ մահմեդական ընտիրների երեսփոխան Խրիմեան։

10. ՎԱՆ, 21 մարտ—2 ապրիլ 1880։ Սովը օրըստօրէ սաստկանում է։ Մեր թղթակիցների հաղորդած տեղեկութիւնների համեմատ գիւղերի մէջ սովամահ եղողների զէպքերը բազմանում են։—Ազատագ սովի առաջը առնելու համար հարկաւոր է. 1. Մեռած կամ ուռելու համար մորթված հողագործական անասունների պակասութիւնը լրացնել։ 2. Սովից ցրիւ եկած ժողովուրդը կրկին իրանց երկիրը վերադարձնել։ 3. կառավարութիւնից չնորհում խնդրել, թէ անվճար (պարգևչէ) մնացած տարիների տուրքերի համար և թէ առաջիկայ երկու տարիների հարկերի համար։ 4. Երկիրը փրկել գլխատրպէս քրդերի մոլեռանդութիւնից։ (Այստեղ հեռագրական բանակցութիւնները վանի հետ դադարեցան)։ Թրխման արքեպիսկոպոս։

11. ՎԱՆ, 21 մարտ—2 ապրիլ 1880։ Թէև պարիսպագրաբերից տեղական կառավարութեանը հեռագրվեցաւ, թէ Օսմանեան պետութիւնը 50,000 Սամսոյի քիչ ցորեան չնորհել է մեզ, բայց մինչև այժմ չը գիտենք, որտեղը այդ ցորեանը կը ստանանք թէ ոչ։—Բաղիչէ, Սիլէր, Զուլամերիկ, Մարմեղանց, Նորդուզ, Շատախ գաւառներում ոչինչ չեն սերմանել, իսկ ուրիշ տեղերում փոքր ի չատ սերմ ցանել են։ Այս պատճառով սերմանելու առհասարակ մեծ կարօտութիւն կայ։ Այս տարի անհնար է եղիպատցորեան և գեանխնդոր մշակել տալ ժողովրդին։ Այդ միջոցի մէջ յանձնաժողովից հրատարակած հրամանքը պէտք նրանց սերմ տալու համարհոգ տանենք։ Կանխապէս մեր ցոյց տուած տեղերից գլխատրպէս Մուշից մեզ ցորեան հասցնելու համար դիմում ենք ձեր ազնուութեանը։ Խղճմտանքով աշխատում ենք։ Թրխման արքեպիսկոպոս։

12. ԿԱՐԻՆ, 13/29 մարտ, 1880։ Բասենի մասնախմբի հաղորդած տեղեկութիւնների համեմատ, և ձեր հրամանների համեմատ պիտի գործենք Բասենի համար։—Մեզ հասած մանրամասն տեղեկութիւնների համեմատ Աշխերտում մէկ ամսվայ մէջ 106 հայեր սովամահ են եղել, որոնց անունները նամակով ձեզ կը յայտնենք (համակիր դեռ չէ հասել)։—Ղարաքիլսայի և Աշխերտի մէջ ասելի քան 3500 հոգի հացի կարօտ և չքաւոր են։—Եթէ իր ժամանակին, նրանց պետդքների համեմատ, արագ օգնութիւն չը հասնի, ապագան խիստ հաւանր է։—Կանոնաւոր թղթատարութիւն և ճանապարհների ապահովութիւն չը լինելու պատճառով, պարտաւորվեցանք ձեր ուղարկած գումարը վանից փոխանակագրով մաս առ մաս այնտեղ հասցնել։ Մասնաժողովի առանդպիր Պալպարան։

13. ԿԱՐԻՆ, 19/31 մարտ, 1880։ Աշխերտի, Արա-քիլիսէի, Բասէնի և Վանի վերաբերութեամբ ձեր հրամանները առանձին սուրհանդակով կանոնաւորապէս հրատարակում ենք։—Ձեր նուէրը ուղարկեցինք Աշխերտ։—Աշխերտի, Բուլանխի և Մանազկերտի չրջակայքում մի կարծէք, թէ արմատք կան։—Այս կարծիքական արմատները ձեռք բերելու համար հարկ եղած հրամանները տուեցինք,—եթէ այդ անկարելի լինի, պէտք է պատեղից ցորեան գնենք և ուղարկենք։ Դիտաւորութիւն ունենք նաև գեանխնդոր գնել և Աշխերտ ուղարկել։ Որ և գիրեր տպեսում ենք. վստահ եղէք մեզ վրա։ Մասնաժողովի առանդպիր Պալարան։

14. ԿԱՐԻՆ, 6 ապրիլ, 1880։ Ոսկին անօգուտ է Բասէնի մէջ։ Հացի կարօտութիւն կայ, որի գտնելու համար դէպի զանազան կողմեր մարդիկ ուղարկեցինք։—Գալարի և դրամի համար վանի հետ մեր հեռագրական բանակցութիւնները չարունակվում են։ Մասնաժողովի առանդպիր Պալարան։

15. ՍԷՂԵՐՏ, 17/29 մարտ, 1880։ Ցորեանի վաճառման հոսքայի գինը երեք ռուբլի է։ Յեղեցիք թափվեցան քաղաքը։ Քաղցածութիւնից մեռնելու սարսափան հասած են։ Մասնաժողովանները հաւասարապէս թշուառ են։ Գթութեան ենք սպասում։ Դանիէլ Թիւրքասան։

16. ՄՈՒՍՈՒԼ, 26 մարտ, 1880։ Անենկարգութիւն է սովեալների տեսարանը, որոնք ամէն կողմից գիմում են դէպի քաղաքը և հաւաքվում են այստեղ։ Մինչև անգամ գարի չը գտնելով, դիմեցին կերակրվում և փուանդութիւնների ենթակայ են լինում։ Շատերը ամենեին կերակուր չէ գտնելով, քաղցածութիւնից մեռնում են։ Սովի տառապանքների և ցաւերի անուշով գթութիւն ենք աղաղակում և առաջ օգնութիւն ենք խնդրում Ասորի արքեպիսկոպոս Բենիամին։

17. ՊԻԼՆՅԻ, 17/29 մարտ, 1880։ Սովը գիւղերի մէջ օրըստօրէ սաստկանում է։ Գիւղացիները թափվեցան քաղաքը և սովամահներ սկսված լինելը իմացում տուեցին. արքունի ամբարներից պարարով ցորեան խնդրեցին հունձքի ժամանակում վճարելու պայմանով, բայց ոչինչ չէ կարողացան ստանալ։ Ձեր չնորհած սովին բաւական չէ։ Գիւղացիները առհասարակ զուրկ են պարարից։ Արաց և հզոր օգնութիւնների կարօտ են։ Առաջնորդ Պիլէզիկի Ղեմոյ։

18. ԿԷՅՎԷ, 15/27 մարտի, 1880։ Ձորս ամիսների ընթացքում ձմեռվայ սաստկութիւնից և պարարի սակաւութիւնից տանջվելով, կառավարութեանը դիմեցինք, և միմանց օգնելով ապրեցանք, բայց հիմայ ամենքս էլ հաւասարապէս քաղցած մնացինք։—Աղաչանքով և պաղատանքով կոյսերական հզոր գթութեանն ենք ապատեսում։ Կէյվէ, Օրթաքէօի բնակիչների երես փոխան Անանիա Տանի Արարատ։

19. ՆԻԿՈՄԻԴԻԱ, 15/27 մարտ, 1880։ Ցնծվայ սաստկութեան և պարարի սակաւութեան պատճառով վիճակիս հայ ժողովուրդը անենարդի տառապանքների ենթարկվեցաւ։ Անասունները ջարդվեցան և մարդիկների մէջ սովամահներ պատահեցան։ Բան հազար քիլէ ցորենի անհրաժեշտ կարօտութիւն ունենք։ Յեղական կառավարութիւնը վիճակիս ստանալուց յետոյ, փութացէք մեզ օգնելու։ Առաջնորդ Սամփան վարդապետ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսր, հինգշաբթի օր, հրատարակում ենք «Մշակի» վերջին համարը Զատկի տոներից առաջ. հետևյալ համարը կը հրատարակենք հինգշաբթի օր, ապրիլի 24-ին։

—

„Кавказъ“ լրագիրը հաղորդում է, որ գեներալ Սկոբելև հասավ Թիֆլիս։

—

Կիրակի, ապրիլի 13-ին, Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու գաթեում կատարվեցավ Թեմական առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Այվազովսկու, Քաղաքի հանդիսաց, Տեղական վարչության ներկայացուցիչները, քաղաքիս բոլոր հայոց դպրոցների աշակերտները և ահագին բազմություն ներկայ էին հանդիսին։ Վրաստանի էկզարքոս, առուստաւան, կաշ օլիկ և մինչև անգամ մահմեդական հոգևոր անձինք բոլոր ներկայությամբ պատվեցին հանդեսին։

—

Ներսիսեան հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի հոգաբարձությունը կարգադրել է կատարել հոգեհանգիստ ապրիլ ամսոյս 27-ին, նոր կիրակի (Կարմիր հազարեկ) օրը, Յովսէփ Էմինեանցի գերեզմանի վրա վանքի եկեղեցու գաթեում, պատարագից յետոյ։ Լուսավորչական Ամենայնի Կաթողիկոսը նուիրել է Ներսիսեան դպրոցին մի նշանաւոր գոհար։

—

Ստացանք յոգուտ Թիւրքաց Հայաստանի սովամահներ 60 ռուբլի նուէր Թիֆլիսաբնակ տիկին Նատալիա Ստեփանեան Ղարաշեանի կողմից հանեալ նամակով. «Տեղական սովորության համեմատ պարտաւոր լինելով իմ հանգուցեալ ամուսնի Գէորգ Ղարաշեանի հոգեհանգստին մեր բարեկամներին իւրաքանչ (նվագք) բաժանել, աւելի լաւ համարեցի այդ իւրաքանչի ծախսով օգնել վանի մեր սովամահ եղբայրներին։ Վասն որոյ խնդրեմ ընդունելդ իմ կամաւոր նուէրս 60 ռ. յոգուտ սովամահների և հասցրէք ուր հարկն է։»

—

Ստացանք ԵՐԵՎԱՆԻՑ գաւառական զանձապետ պ. Արտէմ Վարշամանցից 10 ռուբլի յոգուտ Վանի սովալուներին։

—

ՐՕՍՏՈՎ (Դոնի վրա) քաղաքից մեզ գրում են։ «Լիսաբերի հայերը, որոնց թիւը 400 տուն են, ոչ եկեղեցի և ոչ դպրոց ունեն և ստիպված են Նորնախիջևան գնալ աղօթելու համար, նոյնպես այնտեղի դպրոցներ են օգտվում իրանց զաւակներին։ Բուսաստի մէջ կան հայեր, որոնք երեսուն տարի հայոց եկեղեցի չը տեսան, մինչև չունենալով հեռանալ քաղաքից»։

—

Շնորհակալությամբ ստացանք Թիֆլիսում հրատարակված հետևեալ նոր գրքոյկը. «Ծաէլը», կամ վեհեցեկի մարդ Վիլիամ Շեկսպիրի ողբերգությունն, թարգմանությունն Ստեփան Սալիմանեանցի։ Ողբերգության հետ միասին հրատարակված է և Շեկսպիրի կենսագրությունը։ Գրքի գինը 60 կոպեկ է։ Ցրված է Ց. Մարտիրոսեանի տպարանում։

—

Շնորհակալությամբ ստացանք Շուշու մէջ տպված Ջն Վիլիամ Դրէյպերի «Պատմություն մտաւոր զարգացման Եւրոպայոյ» գրքի հայերէն թարգմանությունը։ Թարգմանողը Արիստակէս Վ. Սեդրակեանն է։ Ցրված է Մելիքյան Մատեսի Յակոբեանցի տպարանում։

—

Շնորհակալությամբ ստացանք Կ. Պոլսի մէջ տպված «Հայկական բառարանություն գիրքը, հանգանակությունն Եղբայր Ն. Բիւրատեանցու։ Տպագրությունն Գ. Գիրիգեանի։

—

Գ. Մելիքյանի խնդրում է մեզ յայտնել հետևյալը. «Իմ պատկերահանդեսը, որտեղ կան հին և նոր արհեստագէտների հեղինակությունները, բաց կը մնա ապրիլի 21-ից մինչև մայիսի 21-ը, ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6½ ժամը։ Պատկերահանդէսի մէջ կան յատ նոր պատկերներ հետևեալ հեղինակներից։ Այվազովսկու, Բրեյովի, Բագոլյուբովի, Միկեշինի, Բայկովի, Լագորիսի և այլ նշանաւոր հեղինակների հին ինքնուրոյն նկարներ։ Մուտքի վարձը առհասարակ 20 կ. կը լինի, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը մուտքի վարձը 50 կ. կը լինի։ Պատկերահանդեսից ստացված բոլոր եկամուտը նշանակված է յոգուտ Վանի սովամահների»։

—

Ընթերցողը գիտէ որ երկու ամսվա ընթացքում, փետրվարի սկզբից մինչև ապրիլի սկզբը մենք ուղարկեցինք սովելոց խնամող Կ. Պոլսի մասնաժողովին 22,000 ռուբլ։ Այս օրերս նոր ստացանք միւսը մասնաժողովից որ այդ գումարից 16 հազարը ստացված է Կ. Պոլսում։ Մենք հեռագրով ենք փոխադրում փողերը, բայց մասնաժողովը ստացման մասին նամակով է պատասխանում Երևի մնացած 6 հազար ռուբլ այժմ ստացված է արդէն։

—

Կ. Պոլսի մասնաժողովից ստացած և «Մշակի» ներկայ համարում տպված տեղեկությունների մէջ ընթերցողի ուշադրությունը դարձնում զլխաւորապէս Աշակերտի հեռագիրների վրա։ Մինչէ այդ հեռագիրները կարդալուց յետոյ էլ Լիմիածինը կը պահի իր մոտ յոգուտ Աշակերտացիների հաւաքած 17 հազար ռուբլ գումարը։

—

Ներկայ համարում ընթերցողը կը կարդայ Ախալցխայից ստացած Հայ-Կաթոլիկ ստորագրությամբ մի նամակ։ Ամոթ մեզ, հայ-լուսաւորչականներս, որ մենք դարձեալ չարունակում ենք հալածել մեր կաթոլիկ և բողոքական եղբայրներին։ Մինչէ մենք դեռ մինչև դարերում ենք ապրում և ուզում և ինչներորդ դարի լուսաւորագին ոչինչ կրթողական ներգործություն չէ ունեցել մեզ վրա։

—

«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունի, եթէ մի առանձին զրաւումը չարգելի նրան, դիտաւորություն ունի պատասել այս տող օրերին մի հրապարակական զասախոսություն հայերէն լեզուով «Ազգի մասին»։ Եթէ այդ դիտաւորությունը կատարվի, զասախոսությունը կը կարդացվի տոներից յետոյ, յոգուտ Թիւրքաց Հայաստանի սովամահների։

—

Ստացանք յոգուտ Վանի սովամահների 2 ռ. Թիֆլիսաբնակ Աւետիք Վարդապետանից։

—

Թիֆլիսաբնակ Նիկոդոսյա Մկրտչ-Հովհաննիսյանի ձեռքով ստացանք 2 ռ. 40 կ. յոգուտ Թիւրքաց Հայաստանի սովամահների որ նուիրել են հետեւեալ անձինք. Գանձուկեցեանց 1 ռ., Անանեանց 1 ռ., Ա. Իւզբաշեանց 40 կ.։ Ընդամենը 2 ռ. 40 կ.։

—

Խմբագրությունը ստացաւ Թիֆլիսաբնակ պ. Գրիգոր Բէյժանեանցից 2 ռուբլ յոգուտ Թիւրքաց Հայաստանի սովելոց։

—

„Кавказъ“ լրագրում կարդում ենք, որ Նորին Բարձրությունն Կովկասեան փոխարքայից Պետերբուրգ ներկայացրած առաջարկությունը թույլ տալ և Անդրկովկասում պատաւոր հաշտարար դատաւորներ ընտրել, հաստատվեցաւ Պետերբուրգից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ հետևեալ տեղեկությունները ենք կարդում անգլիական նոր պարլամենտի անդամների ընտրությունների մասին։

Զորեքշաբթի, ապրիլի 14-ին վերջանում են անգլիական պարլամենտի անդամների ընտրությունները։ Ազատամիտները կատարելապէս յաղթեցին և այժմ 100 ձայների զուտ մեծամասնություն ունեն։ Լօնդոնի մասնավոր դարձեալ ընտրությունների մասին գրել և այժմ իր զլխաւոր առաջնորդող յոդուածները նուիրում է ապագայ մինիստրության կազմակերպությանը։

Անգլիական բազմաթիւ լրագիրների կարծիքով, անկարելի է ենթադրել, որ նոր մինիստրությունը Դլադստոն չը մասնակցի։ Շատ արտիւններից երևաց, որ ազատամտները իրանց յաղթությամբ պարտական են Դլադստոնին և այն եռանդին, որով նա առաջնորդում էր ընտրողական կռիւներին։ Թէ ազատամիտ և թէ պահպանողական լրագիրները խոստովանվում են, որ առանց Դլադստոնի մասնակցության, այժմ ոչ մի մինիստրություն հաստատ չէ կարող լինել։ Դժուարը միայն այն է, թէ ինչպիսի դեր պէտք է տալ Դլադստոնին նոր մինիստրության մէջ։

Գործի այդ կողմը քննելով «Economist» լրագիրը ազատամիտ մինիստրության անձնական կազմակերպության ամբողջ մի նախագիծ է առաջարկում։ Այդ նախագիծը հետևեալն է. Դլադստոն առաջին մինիստր, Գրենվիլ արտաքին գործերի, կոմս Դերբի ներքին գործերի, բացի այդ լրագրի կարծիքով զանձարանի կանցլերի պաշտօնը նոյնպէս պէտք է Դլադստոնին յանձնել։ Անգլիայում առհասարակ ընդունված չէ, որ առաջին մինիստրը լինի նոյնպէս և զանձարանի կանցլեր, բայց այդպիսի օրինակներ եղել են։

Պէտք է խոստովանել, որ ազատամիտների համար շատ լաւ կը լինէր, եթէ Դլադստոն համաձայներ կատարել երկրի ֆինանսները։ Անգլիական ժողովուրդը այնքան հաւատում է այդ երևելի ֆինանսիստի ֆինանսական ընդունակությունների, որ երբ լսեր տարածվեց, թէ Դլադստոն պէտք է կատարէ անգլիական զանձարանը, Լօնդոնի բորսայի վրա անգլիական արժէքդիների գները բարձրացան։ Անգլիացիների կարծիքով միայն նա կարող է բարեյուսել պահպանողականներից վատացրած անգլիական ֆինանսների դրությունը։ Եթէ «Economiste» լրագրի առաջարկած նախագծի համեմատ մինիստրություն կազմվեցաւ, մի երկու կամ երեք տարիներից յետոյ պահպանողականներից թողած 8,000,000 ֆունտ ստերլինգ դեֆիցիտի հետքը անգամ չի մընայ։

Լօնդոնում ամենքը համոզված են, որ թագուհին Դլադստոնին չի յանձնի մինիստրության կազմելը, այլ կը հրաւիրի կոմս Գրենվիլին կամ Հարտինգտոնին։ Հրաւիրվածը կարող է հրաժարվել և Դլադստոնի վրա մնանացոյց լինել, բայց կասկածելի է, արդեօք կը հետեւի թագուհին այդպիսի ցուցմունքին թէ ոչ, որովհետև թագուհու յայտնի անձնական հակակրությունը դէպի Դլադստոնը վերջին տարիների ընթացքում Բիկենսֆիլդի ազդեցության տակ աւելի էլ սաստկացել է։

Հետագիրը հաղորդեց, որ մինիստրության կազմելը Հարտինգտոնին յանձնվեցաւ։

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզի 18-ը ընտրական շրջանի պատգամաւոր Կլեմանսոն նորերումս իր ընտրողների առաջ Ֆերնանդօլ ցիրկի մէջ մի ճառ կարդաց, որից քաղուածքներ տպված են լրագիրների մէջ։ Իրրև արմատական կուսակցության առաջնորդ, իբրև ազգային ժողովի արմատական բաժնի ներկայացուցիչ, նա իր ճառով նկարագրեց արմատական կուսակցության ամբողջ նախագիծը։ Ցիշեցնելով Գամբետայի խօսքերը. «ամեն բանի մէջ մինչև վերջը պէտք է գնալ», Կլեմանսո աշխատում էր ապացուցանել, որ կառավարությունը միշտ կէս ճանապարհի վրա է կանգնում։ Դեռ 1877 թուականին առաջարկվեցաւ քաղաքային վերանորոգությունների նախագիծը, բայց մինչև այժմ նրա քննությունը չեն սկսել։ Մամուլի ազատության օրէնքը դեռ ևս չէ մշակված, այլ օրէնքի տեղ միայն Համբերություն կայ։ Ժողովների հաւաքվելու և ընկերությունների ազատության օրէնքները դեռ ևս յետաձգվում են և առժամանակ կառավարությունը փակում է կլուբներ և կարգադրում է, որ հասարակական կարգապահության դէմ ճառեր չարտասանվեն։ Ազգային ժողովների մեծամասնությունը մինչև այժմ չը կարողացաւ համաձայնվել կառավարության հետ դատաւորների անփոփոխության օրէնքը վերացնելու վերաբերությամբ։ Ժողովրդական լուսաւորության համար մի բան արված է, բայց ինչ կը նշանակի 3 միլիարդի բիւջէնս ունենալ, իսկ ուսուցիչների վրա միայն 50 միլիոնից քիչ աւելի ծախսել։ Ժողովրդական լուսաւորության մինիստրը պարտադիր և ձրի ուսման նախագիծ առաջարկեց, բայց այդ նախագծի մէջ չէ ասված, թէ ուսումը աշխարհային կը լինի։ Եւ որովհետև կրօնական կրթությունը պարտադիր է ուսուցիչների մէջ, ուրեմն աշխարհային կրթությունն էլ պարտադիր չը դարձնելը կը նշանակի բռնաբարել խղճի ազատությունը։ Ֆերրիի օրէնքի 7-դ յօդուածի, կառավարության հրամանների և եզրափակիչներին արտաքսելու մասին Կլեմանսո ասաց, որ այդ կարգադրությունները անօգուտ և վտանգաւոր են։ Կղերական հարցը վճռելու համար միայն մի միջոց կայ, այն է բաժանել եկեղեցին պետությունից և ընկերություններին ազատություն տալ։ Կառավարությունը հոգևորականության մէջ զանազանում է մի քանի տարբեր, որոնք չեն կարող համաձայնվել պետական կարգի սկզբունքների հետ, այն տարբերից, որոնք կարող են համաձայնվել։ Բայց հոգևորականությունը չէ կամենում ճանաչել այդ զանազանությունը. հոգևորականությունը, ինչպէս մի մարդ, ինչպէս մի անհատ, պաշտպանում է միարանություններին։ Մինիստրը հաստատում է, որ կրօնական միարանությունները կառավարությունից ճանաչված եկեղեցուց օտար հիմնարկություններ են։ Կլեմանսոյի կարծիքով, դրա մասին կարող են դատել միայն պապը և հոգևորականությունը։ Քննելով այն պատճառները, որոնք արգելում են հանրապետության զարգացմանը, Կլեմանսո ասում է, որ անտարբերությունը արգելում է գործել պատգամաւորների ժողովին։ Ճառի շարունակության մէջ ասված է, որ կոմունային մասնակցողները պէտք է կատարեալ ներում ստանան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գ. Ալէքսանդր Միրզոյեվ խնդրում է մեզ յայտնել որ նրան հեռագրով թույլ է տուած իր գեղարուեստական հանդիսի համար, յոգուտ Վանի հայ սովելոց, վերցնել պալատից, Նորին Կայսերական Բարձրության փոխարքայի սեփական սենեակներից զանազան պատկերներ, նկարներ, բոյսեր և ծաղիկներ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Продается двухъ-этажный домъ на Абасъ-Абатской площади. Объ условіяхъ узнать въ типографіи Меликова, Сололакская улица, № 12.

Նախվում է երկու յարկանի մի տուն Աբաս-Աբատեան հրապարակի վրա։ Պայմանների մասին հարցնել Մելիքովի տպարանում, Սալալակսայա փողոց, № 12.

1—3